

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ Р Е Ц Е Н З И И

Ս. Գ. ԱՔՐԱՀԱՄՅԱՆ, Ժամանակակից հայերենի չթերվող խոսքի մասերը, Հայկական ՍՍԽ ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1959:

Ժամանակակից հայերենի գիտական բերականության անհրաժեշտությունը վաղուց է դրացվում: Այդ անհետաձգելի պահանջը բավարարելու ուղղությամբ հատկապես վերջին շրջանում յուրյ աշխատանք է կատարում Հայկ. ՍՍԽ ԳԱ լեզվի ինստիտուտը: Վերջերս հրատարակվեց նույն ինստիտուտի կողմից տպագրության հանձնած գոյեկետ Ս. Գ. Արաքսյանի «Արդի հայերենի չթերվող խոսքի մասերը» ուսումնասիրությունը: Գրված լինելով ժամանակակից հայերենի գիտական բերականություն կազմելու պահանջով, անհրաժեշտության դեպքում այդ ուսումնասիրությունը հեշտությամբ կարող է դառնալ այդպիսի ձեռնարկի համապատասխան բաժնի տեքստ:

Գրախոսվող ուսումնասիրությունը բաղկացած է ներածությունից և հինգ գլուխներից: Ներածության մեջ հեղինակին առանձնապես հետաքրքրողը խոսքի մասերի որոշման հիմունքին վերաբերող հարցերն են: Հատկապես, որ հայերենի խոսքի մասերի որոշման հիմունք ընդունված է բառի ընդհանուր (ոչ կոնսոնդրատային) խմատը: Այդ հիմունքը, որ ենթադրում է յուրաքանչյուր բառ որոշակիորեն դասել որևէ մեկ խոսքի մասի շարքը, իրեն միանգամայն արդարացնելով հայոց լեզվի բառերի ճշույթ մեծամասնության դասակարգման հարցում, այնուամենայնիվ, ինչպես իրավացիորեն նկատում է գրքի հեղինակը, պահանջում է առանձին դեպքերում ցուցաբերել կոնկրետ մոտեցում: Առանձնապես այս գրքի հեղինակի համար ավելի անհրաժեշտ է եղել այդպիսի մոտեցում ցուցաբերելը, որովհետև հատկապես իր ուսումնասիրության ենթակա խոսքի մասերը այնպիսիք են, որոնք կազմվում, հարստացվում են այլ խոսքի մասերի հաշվին, այսինքն՝ ավելի զգալուն ձևով են արտացոլում լեզվի, որպես կենդանի պրոցեսի, էությունը, նրա բաղադրիչների, հատկապես բառերի ու նրանց խմատների փոփոխության ենթակա լինելը: Համա-

պատասխան փաստերի վերլուծությունը հեղինակին բերում է այն անխախտ համոզմանը, որ այս կամ այն բառը լեզվի զարգացման տվյալ շրջանում կարող է ունենալ երկու բնորոշ, ընդհանուր, «խոսքի մասային երկփեղկված» խմատներ և այս վերջիններով պայմանավորված համապատասխան բերականության հատկանիշներ: Այսպիսի բառերի, որոնց բանակը սահմանափակ է, խոսքի մասային պատկանելությունը որոշելիս հեղինակը անխուսափելի է համարել հաշվի առնել նաև շարահյուսական կիրառությունը՝ որպես օժանդակ միջոց: «Կան շարահյուսական այնպիսի ընդհանուր կարգի կիրառություններ, որոնք հանդիսանում են բառի խոսքի մասային բնորոշ խմատի դրսևորման փաստ» (էջ 12): Այսպիսի մոտեցումը, մեր կարծիքով, ճիշտ է ու կոնկրետ, հետևաբար ամենևին էլ չի նշանակում խոսքի մասերի որոշման հարցում նահանջել բառի ընդհանուր խմատը հաշվի առնելու հիմունքից: Հեղինակն այս հիմունքով էլ հաջողությամբ առաջնորդվել է ուսումնասիրության ենթակա խոսքի մասերը որոշելիս, դասակարգելիս:

Աշխատության հինգ գլուխներից յուրաքանչյուրը նվիրված է մեկ առանձին խոսքի մասի ուսումնասիրմանը: Առաջին գլխում քննված է մակբայը: Նշելով հատկանիշի հատկանիշ ցույց տալու, համեմատության աստիճաններ ունենալու, մասամբ և հոլովվելու հարցում առանձին դերանունների, ածականի ու գոյականի և մակբայի որոշ ընդհանրությունը, հանգամանորեն քննում է դրանց էական, արմատական տարբերությունները, որով և ավելի որոշակի ու խորն է դառնում մակբայի ճանաչումը: Այս տեսակետից ուշագրավ է նաև այն հարցի բացահայտումը, թե ինչու հատկանիշ ցույց տվող բառերը հոլովվում են, իսկ Ֆակբայները՝ ոչ, դրա պատճառն իրավացիորեն այն համարելով, որ մակբայները, պայմանավորված իրենց խմատով ու կիրառությամբ,

գուրկ են իրենց մեջ առարկայի իմաստ ներառելու հնարավորությունից:

Մակբայներն բոլոր կազմության բաժանված են չինգ տեսակի՝ պարզ կամ արմատական, բարդ, ածանցավոր, բերականական ձևերից կազմված և նկարագրական, որոնք քննված են առանձին-առանձին: Բարդ մակբայների քննություն ժամանակ մասնավորապես ցույց է տրված նախդիրների այն բավական մեծ դերը, որ կատարում են նրանք մակբայների կազմության մեջ: Մակբայների կազմության մասնակցող ածանցները քննելիս դրանք իրավացիորեն բաժանում է երկու խմբի և ամենայն մանրամասնությամբ նշում յուրաքանչյուր ածանցի իմաստային տարրեր ու բազմազան առումները, կիրառական յուրահատկությունները: Առանձին են քննված բերականական ձևերից կազմված մակբայները: Դիշտ է մեկնաբանված, թե ինչու այս հարցում ավելի ակտիվ մասնակցություն ունեն ոչ թե խոնարհման կամ դերբայական, այլ հոլովական ձևերը, հատկապես գործիական և բացառական (հազիվ, սակավ, անձամբ, շուտով, վաղուց, նորից և այլն): Առանձին տեսակ են համարված նկարագրական մակբայները: Որպես այդպիսիք համարվել են բառերի կիսակալուն կապակցությունները, որոնք ունեն մակբայական իմաստ և մակբայական կիրառություն՝ մեծ մասամբ, վերին աստիճանի, չափից դուրս, մի կերպ, ծայր աստիճան, կիսով չափ և այլն: Մակբայների կազմության այսպիսի հանգամանակից ու մանրամասն քննությունն ունի և՛ տեսական, և՛ գործնական կարևոր արժեք:

Մակբայների տեսակային պատկանելությունը որոշելու հարցի նկատմամբ կոնկրետ մոտեցում ցուցաբերելու շնորհիվ Ս. Աբրահամյանը կարողացել է միանգամայն ճիշտ լուծել դրանց դասակարգման խնդիրը: Բացի ժամանակի, տեղի, ձևի, չափ ու քանակի մակբայներից, առանձին տեսակ է համարում նաև ընդհանրական մակբայները: Որանց քննության ժամանակ հեղինակը ցուցաբերել է անհրաժեշտ ներանկատություն, նուրբ մանրամասնությունները բացահայտելու անժխտելի կարողություն: Նկատելով մակբայների արտահայտած ժամանակի, տեղի, չափ ու քանակի, ձևի իմաստային զանազան յուրահատկությունները, մակբայների տեսակները բաժանում է մի քանի խմբերի կամ ենթատեսակների: Այսպես, օրինակ, ընդունում է ժամանակի մակբայների այսպիսի խմբեր. հատկանիշի մշտատևություն ցույց տվող (միշտ, առմիշտ, հավետ, բնդմիշտ), տարրորոշված ժամանակ ցույց տվող (այժմ, հիմա, ներկայումս), ժամանակի համեմատարար կոնկրետ իմաստ արտահայտող՝

կապված ժամանակի միավորումների հետ (գիշերով, առավոտյան), ժամանակի տեսականության իմաստ ունեցող (ամսեամիս, տարեցտարի, օրեցօր և այլն): Կարծում ենք՝ չի կարելի չհամաձայնել հեղինակի հետ այն հարցում, որ ավելի ճիշտ կլինի ձևի մակբայներն անվանել որակական մակբայներ: Սա, իսկապես, ոչ թե բերականական իրողության ինչ-որ սոսկ վերանվանման հարց է, այլ միջոց է ձևի մակբայների իմաստային բնորոշ կողմը ճիշտ ներկայացնելու համար: Օգտագործելով այս միջոցը, նա ընդգծում է, որ ձևի մակբայ կոչվածների իմաստի բնորոշ կողմը այն է, որ դրանք գերազանցապես ցույց են տալիս հատկանիշի որակական հատկանիշ՝ նրա տակ հասկանալով գործողության թե՛ ներքին և թե՛ արտաքին հատկանիշներ: Գործողության կատարման արտաքին հատկանիշ ցույց տվող ձևի մակբայների մեջ են դասված հետևյալները՝ կամաց, կամացով, արագ, դանդաղ, միանգամից և այլն: Հատկանիշի ներքին որակական հատկանիշ ցույց տվող մակբայների ձևավորման տեսակետից յուրահատկությունն այն է համարում, որ դրանք գերազանցապես կազմվում են ածանցների միջոցով՝ բարեկամաբար, եղբայրաբար, գիտակցաբար, մանրամասնորեն, սրտանց և այլն: Հեղինակը միաժամանակ նշում է, որ այդ երկու խմբում դասված մակբայների իմաստային յուրահատկությունների միջև կա նաև ներքին կապ: Ընդհանրական մակբայների մեջ է դասել այն մակբայները, որոնց բառական իմաստում առկա են մակբայի տարբեր տեսակի իմաստների տարրեր: Այսպես, օրինակ, մեկ-մեկ մակբայը կարող է ցույց տալ և ձև (սեղսեղներն սկսեցին մեկ-մեկ ցրվել), և չափ (սեղսեղ էլ մեկ-մեկ սիրտըս մորմոքում է): Այսպիսի մակբայների շարքն են դասված հետևյալները. շարունակ, անընդհատ, անդադար, ստեպ-ստեպ և այլն: Դիշտ է, ընդհանրական մակբայի դադափարար առաջին անգամ Ս. Աբրահամյանի կողմից է, որ մուտք է գործում հայ բերականագիտության մեջ, որ դրանք ենթարկված են հիմնավոր քննության ու դասդասման:

Գրախոսվող ուսումնասիրության երկրորդ մասը նվիրված է կապի քննությանը: Հեղինակի ինքնուրույն մոտեցումն արտահայտվել է այս խոսքի մասի ինչպես բնորոշման, այնպես էլ տեսակների որոշման, ճշտման հարցում: Նշելով կապերի և հոլովական վերջավորությունների դերի ընդհանրությունը, միաժամանակ բացահայտում է դրանց տարբերիչ գծերը. կապերը բառեր լինելով, ունեն բառային ձև և իմաստ, նրանց արտահայտած հարաբե-

րություն իմաստը պակաս վերացական է: Կապերին սովորաբար վերագրվել է պտրագաները ստորոգյալին կապելու գեր: Հեղինակն անհրաժեշտ փաստերով ցույց է տալիս, որ կապը ոչ միայն պարագան է կապում ստորոգյալի հետ (որը, իհարկե, կապի տարածված դերն է), այլև նախադասության ուրիշ երկրորդական անդամներ՝ խնդիրներ, որոշիչներ, մասնական բացահայտիչ: Ուրեմն կապերի համար հատկանշական բառերի ստորադասական տարբեր հարաբերություններ արտահայտելն է: Հաշվի առնելով նաև այս հանգամանքը, Ս. Արրահամյանը ճշտում է կապի, որպես խոսքի մասի, բնորոշումը, որի մեջ կապը սահմանադրվում է ոչ միայն նյութական խոսքի մասերից, այլև վերաբերական իմաստ ունեցող մյուս խոսքի մասից՝ շղկապից:

Հեղինակին հաջողվել է ճիշտ որոշել կապերի բոլոր իմաստի դասակարգման հիմունքը: Երևելով այն սկզբունքից, որ յուրաքանչյուր խոսքի մասի ըստ իմաստի դասակարգման հիմքում պետք է ընկած լինի տվյալ խոսքի մասի համար իմաստային ամենաբնորոշ հատկանիշը, կապերի դասակարգման հիմունք համարում է նրանց հարաբերության իմաստը: Այս հարցի ճիշտ լուծումը հեղինակին հնարավորություն է տվել հիմնովին վերանայել ու ճշտել կապերի տեսակները, նա ընդունում է կապերի տասներմեկ տեսակ: Իսկ ինչպե՞ս է վարվել կապերի տրագիցիոն տեսակների հետ (խսկական, անիսկական կապեր, կապական բառեր): Նա գրանցից չի հրաժարվել, ընդունում է գրանց գոյություն, բայց այլ մոտեցմամբ. բոլոր կապավորման աստիճանի: Հաշվի առնելով կապերի առաջացման պատմական պրոցեսը, գրանք գիտել է որպես կապերի կազմավորման երկր հիմնական աստիճաններ, իսկական կապեր է համարում այն բառերը, որոնք զրկված են նյութական իմաստից և հանդես են գալիս միայն որպես կապ: Անիսկական կապերի մեջ է դասում այն բառերը, որոնք չեն զրկվել այլ խոսքի մասի իմաստից, որից անցնում են կապերին, բայց նրանց հիմնական խոսքի մասային իմաստն արդեն երկփեղկված է, և նյութական իմաստի կողքին հավասար կամ առավել չափով հանդես են գալիս կապի խոսքի մասային որոշակի իմաստն ու հատկանիշները: Այս երկու խմբերից դուրս մնացող մյուս բառերը, որոնք կարող են հանդես գալ կապական կիրառությամբ, գիտվում են որպես կապական բառեր: Նրանց իմաստի մեջ իշխողը, որոշիչը նյութական իմաստն է: Այս նկատի ունենալով, հեղինակը սրանք դուրս է թողնում կապի, որպես խոսքի մասի, սխտեմից, սրանք կապ չի համարում: Հեղինակի կողմից վերանայված,

ճշտված և համարված է կապերի այս տեսակների ցանկը: Հարկ չէա չափից ավելի բծախնդրություն ցուցաբերել, այս խմբերի միջև խիստ որոշակի սահման դնել, ինչպես և փորձել առարկել մեկ-երկու բառի՝ անիսկական կապերի թե՛ կապական բառերի մեջ դասելու վերաբերյալ, որովհետև, ինչպես իրավացիորեն հեղինակն էլ է նկատում, այդպիսի տատանումները «պայմանավորված են իրենց իսկ լեզվական փաստերի տատանումներով, այսինքրն տվյալի բառի կամ բառերի անցման վիճակում գտնվելու, բառերի այդ երկու խմբերի սահմանադրում լինելու հանգամանքով» (ԼԳ 83): Սակայն այստեղ պիտի նշել, որ հեղինակը անդգուշաբար «համաձայն» բառը դասել է նաև կապական բառերի շարքում:

Աշխատության այս գլխի զգալի մասը նվիրված է կապերի տեսակների ծավալուն ու մանրակրկիտ ուսումնասիրմանը. քննված են կապերի ոչ միայն հիմնական իմաստները, այլև իմաստային նորը յուրահատկությունները, երկրորդական կիրառությունները: Այսպիսի բարեխղճությամբ ու մանրամասնությամբ են քննված նաև կապվող բառերի հոլովական կիրառությունները: Այս հարցի քննությունը կատարված է բոլոր հոլովների, առանձին է քննված այն կապերի հոլովառությունը, որոնք հավասարապես կարող են զրկվել տարբեր հոլովների վրա: Մեր կարծիքով տեղին է հեղինակի դիտողությունը կապերին խնդրառության կատեգորիան վերագրելու մասին: Համոզիչ ձևով ցույց է տրված, որ կապը պայմանավորված իր յուրահատուկ բառական իմաստով, չի կարող լինել խնդրառու (գերագույն) բառ, հետևաբար և ճիշտ չէ «կապի խնդիր» տերմինի զործածելը: Կապվող բառերի գործածության հարցում Ս. Արրահամյանը նկատել է ուշագրավ շատ երևույթներ: Այսպես, նշում է, թե ինչպես ի տարբերություն մյուս բոլոր կապերի, «միջև» կապը պայմանավորված իր իմաստով, զրկվում է մեծ մասամբ զոչականի հոգնակի թվի, ինչպես և բազմակի կապվող բառերի վրա: Առանձնապես ուշագրավ են նաև մեկից ավելի հոլովների հետ գործածվող կապերի հոլովառության յուրահատկության պատճառների բացահայտման վերաբերող դիտողությունները:

Ս. Արրահամյանը շղկապը որպես խոսքի մաս բնորոշելիս հետևելով պրոֆ. Գ. Սևակին, նախ հաշվի է առնում իմաստային կողմը, քննադոնելով, որ անգամ խոսքից դուրս հասկացվում է յուրաքանչյուր շղկապի բառային իմաստը: Միաժամանակ գտնում է, որ չի կարելի հաշվի չառնել նաև շարահյուսական հատկանիշը: Այսպիսի մոտեցումը հիմնավորում է

հատկապես նրանով, որ շաղկապները զուրկ են նյութական իմաստից և ունեն վերաբերական, բերականական իմաստ: Ինչպես իմաստային, այնպես էլ կիրառական տեսակետից շաղկապների տեղը խոսքի մասերի շարքում ավելի որոշակիորեն պարզելու նպատակով շաղկապը համեմատում է մի կողմից հարաբերականի դեր կատարող գերանունների, մյուս կողմից այն խոսքի մասի (կապի) հետ, որին նա շատ մոտ է. և ցույց է տալիս դրանց էական տարբերությունները: Ի տարբերություն կապի, որը թեև ինքնուրույն պաշտոն չի վարում նախադասություն մեջ, բայց որևէ բառի հարաբերություն ցույց տալով՝ այդ բառի հետ էլ հանդես է գալիս որպես նախադասության մեկ անդամ, շաղկապը նախադասության անդամի կազմի մեջ չի մտնում: Այնուհետև, եթե կապերն արտահայտում են բառերի ստորադասական հարաբերություն, ապա շաղկապներին հատուկ է նախադասությունների համադասական և ստորադասական հարաբերություններ արտահայտելու դերը, որը չեն կարող կատարել կապերը: Հանգամանորեն են բնաված շաղկապների տեսակներն ըստ իմաստի (ըստ արտահայտած հարաբերության բնույթի): Համապատասխան փաստերի համոզիչ վերլուծությամբ ցույց է տրված, թե ինչպես որոշ շաղկապներ տարբեր դեպքերում կարող են գործածվել տարբեր իմաստներ ցույց տալու համար: Այս տեսակետից, օրինակ, առանձնապես հետաքրքրական է «թե չէ» շաղկապը, որն իր կիրառության տեղով պայմանավորված կարող է արտահայտել և՛ համադասական («Թող գնորդ ու ձին, քն չի իջավ թվանքիս ոտը»), և՛ ստորադասական («Ընենամ քն չէ, կգրեմ») հարաբերություն և ըստ այդմ էլ լինում է և՛ համադասական, և՛ ստորադասական շաղկապ: Այնուհանդերձ հեղինակն իրավացիորեն բնորոշում է շաղկապների տրագիցիոն բաժանումը երկու տեսակների՝ համադասական և ստորադասական, ավելի ճշտելով դրանց սահմանումը: Համադասական շաղկապները բաժանված են չորս խմբի՝ միավորիչ, ներհակական, տրոհական և մակարբերական: Հաջվի առնելով միավորիչ շաղկապների կիրառության ոլորտը, դրանք իրենց հերթին երկու խմբի է բաժանել: Բուն միավորիչ շաղկապների մեջ է դասում հետևյալները՝ և, ու, թե, ո՛չ... ո՛չ: Սրանք (հատկապես՝ և, ու) կարող են կապելու, միավորելու դեր կատարել թեև բառերի, թե բարդ նախադասության կազմի մեջ մտնող նախադասությունների և թե խոսք կազմող նախադասությունների, հատվածների միջև: Հավելում ցույց տվող շաղկապների (նաև, ևս, այլև, ինչպես և, ինչպես նաև) հիմնական յուրահատկությունը այն է

համարված, որ դրանք արտահայտում են սրվյալ պայմաններում արդեն հղող կամ որևէ տեսակետից հայտնի առարկայի կամ հատկանիշի շարքը այլ առարկա կամ հատկանիշ հավելելու իմաստ: Առանձին են բնաված միավորիչ շաղկապներից առաջացած կրկնավոր շաղկապները, բացահայտված են նրանց կիրառական ու իմաստային առումները: Նույնպիսի մանրամասնությամբ են ուսումնասիրված նաև մյուս համադասական և ամբողջ ստորադասական շաղկապները: Այս խոսքի մասը ևս բավական հանգամանորեն բնաված է նաև կազմության տեսակետից:

Գրախոսվող աշխատության նախազբնից գլխում հալ բերականագիտության մեջ առաջին անգամ Ս. Աբրահամյանը հիմնավոր ձևով բացահայտում է եղանակավորող բառերի իմաստային, ինչպես և շարահյուսական, կիրառական յուրահատկությունները, դրանք բնորոշում է իբրև առանձին խոսքի մաս, որոշում է դրանց տեղը խոսքի մասերի սխեմայում, խմբավորում է ըստ տեսակների և բնույթի կազմությունը: Հայտնի է, որ ժամանակակից հայոց լեզվի բերականության դպրոցական դասագրքերում եղանակավորող բառերը դիտված են որպես ձևի մակրայի մի ենթատեսակ: Ս. Աբրահամյանի կողմից համոզիչ ձևով ցույց են արված դրանց և մակրայների էական տարբերությունները: Ի տարբերություն մակրայների, դրանցով խոսողն իր վերաբերմունքն է արտահայտում այս կամ այն իրողության նկատմամբ: Այնուհետև՝ եղանակավորող բառերը չունեն նյութական իմաստ և չեն լինում նախադասության անդամ: Դրանք ունեն վերաբերության լայն շրջանակներ. կարող են գրվել ամբողջ նախադասության, նրա մի մասի, երբևից էլ մեկ բառի վրա: Այս խոսքի մասի էությունն ավելի բացահայտելու նպատակով համեմատել է նաև ձայնարկությունների հետ: Իմաստային հիմնական տարբերությունն այն է, համարված, որ ձայնարկությունները զգայական վերաբերմունք են արտահայտում, իսկ եղանակավորող բառերը՝ մտածական, դատողական վերաբերմունք: «Եղանակավորող բառերը, — եզրակացնում է հեղինակը, — թե բնահանուր իմաստային տեսակետից, թե կիրառական, շարահյուսական հատկանիշներով ուրույն տեղ են գրավում խոսքի մասերի սխեմայում, որի պատճառով էլ պետք է դիտվեն որպես մակրայներից զատ առանձին կարգի բառեր» (Լ.ջ 220—221): Եղանակավորող բառերը բաժանված են ութ խմբի. հաստատական, ցուցական, ժխտական, գիշական, երկրայական, սաստկական, կամային և սահմանափակման: Բավական հիմնավոր ձևով քննված են սրանց իմաստային յու-

րահատկությունները: Ձի կարելի չհամաձայնվել հեղինակի հետ այն հարցում, որ ժամանակակից հայերենում եղանակավորող բառերից զատ ճիշտ չի լինի ընդունել մի այլ խոսքի մաս կս, այն է՝ մասնիկները:

Գրքի վերջին գլուխը, որ անհամեմատ փորձառվալ է, նվիրված է ձայնարկությունը: Հաջող են բացահայտված ձայնարկությունների ձևային-հնչյունական և իմաստային հատկանիշները: Ձայնարկությունները սակավահնչյուն են, սովորաբար չեն բաղադրվում ձևաչափերից: Ձայնարկությունների ձևավորման, դիտակցման հարցում իրավացիորեն ընդգծված է առողջանություն ունեցած խիստ կարևոր, բացառիկ նշանակությունը. «Այսպիսի հնչյուններն ու հնչյունակապակցությունները դժվար թե իմաստավորվեն և գիտակցվեն որպես բառ, եթե չունենային իրենց յուրահատուկ առողջանությունը» (էջ 243): Ձայնարկությունների իմաստային յուրահատկությունները քննելիս հանդուժել է այն համոզման, որ դրանք արտահայտում են խոսողի ոչ միայն զգացական, այլև կամային վերաբերմունքը: Ըստ այդմ էլ այս խոսքի մասը նոր ձևով է դասակարգում, ընդունելով երկու խումբ՝ զգացմունք արտահայտող և կամային վերաբերմունք արտահայտող ձայնարկություններ: Վերջիններիս համար հատկանշականն այն է համարում, որ խոսողը դրանցով դիմում է խոսակցին և հաճախ իր կամքն է թևակոխում՝ նրան մղելով դեպի որևէ գործողության կատարում: Գեղարվեստական գրականությունից վերցրած հաջող փաստերով ցույց է տրված, թե ինչպես առաջին խմբում դասվող ձայնարկությունները կարող են արտահայտել խոսողի տարբեր, բազմազան զգացմունքներ՝ ուրախություն, ցավ, զարմանք, զղջում, ափսոսանք, վախ, արհամարհանք, դժգոհություն և այլն:

Այսպիսի համառոտակի քննությունից իսկ

դժվար չէ զգալ, որ գրախոսվող գրքում ժամանակակից հայերենի հինգ խոսքի մասերը ուսումնասիրված են համակողմանիորեն, կայուն ու որոշակի սկզբունքով, վերանայվել, նոր ձևով լուսարանվել ու ճշտվել են այդ խոսքի մասերին վերաբերող շատ կարծիքներ: Բազմաթիվ հարցերի ճիշտ լուծմանը նպաստել է հիմնականում այն հանգամանքը, որ հեղինակը չի կաշկանդվել դրանց մասին եղած տրագիկոն մոտեցմամբ, հաշվի է նստել համապատասխան փաստերի հետ, ունկնդրել է դրանց ձայնին:

Մի երկու գիտողություն կարծում ենք, հատկապես կեսօրին, կեսգիշերին բառերը դեռ չեն ենթարկվել այնպիսի փոփոխության, որ հնարավոր լինի դիտել որպես մակրայ (տե՛ս էջ 52): Մեր կարծիքով բոլորաբար, վայրկենաբար մակրայների մեջ ավելի բնորոշ է ձևի, քան թե ժամանակի իմաստը («Նա այդ հարցին բոլորաբար պատասխանեց»), «Էսկիզով ծանոթ ձայնը վայրկենաբար շրջվեց» (էջ 53): Անհրաժեշտ է մակրայ կերտող ածանցների երկրորդ խմբում քննել նաև «ան» նախածանցը (անխոս հեռանալ, հանձնարարությունը անտրտուն կատարել և այլն): Լավ կլինի, եթե հեղինակը բերականական որոշ հասկացողությունների արտահայտման համար երբևից չօգտագործեր զուգահեռ տերմիններ, ինչպես՝ տրոհական շաղկապներ (էջ 199, 261 և այլն), բայց և՛ բաժանական շաղկապ (էջ 165—200 և այլն): Կարծում ենք՝ ճիշտ կլինի միշտ օգտագործել դրանցից առաջինը:

Գրախոսվող աշխատությունը արժեքավոր ներդրում է ժամանակակից հայերենի քերականագիտության մեջ, որը, անշուշտ, շատ օգտակար կլինի ուսանողների, հայոց լեզվի ուսուցիչների և առհասարակ հայերենի քերականական կառուցվածքն ուսումնասիրողների համար:

Ս. ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, *Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք առաջին, Հայկական ՍՍՌԻ ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1957, 526 էջ:*

Մեր տոջն է բազմավաստակ հայագետ Աշոտ Հովհաննիսյանի «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» ծավալուն աշխատության առաջին գիրքը:

Այդ աշխատությունը չի ամփոփում հայ ազատագրական շարժումների և կամ հայ հատարական մտքի պատմությունը ամբողջությամբ

Յլամբ վերցրած, այլ ընդգրկում է թե մեկի և թե մյուսի մի ուրույն կողմը՝ ազատագրական շարժումների զաղափարաբանությունը, հետևաբար հասարակական մտքի պատմության այն հարցերը, որոնք կապված են ազատագրական շարժումների հետ: Խոսելով իր աշխատության բնույթի և նպատակադրման մասին, հեղինակը